ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 24-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Մայր Աթոռ ժամանեց ռուս պրավոսլավ եկեղեցու Աստրախանի առաջնորդ Միխայիլ եպիսկոպոսը:

*
* *

Հուլիսի 26-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզում է տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 28-ին, երեքշաբթի.—Այսօր, ուշ երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Ժենևի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

*
* *

Օգոստոսի 2-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, պատարագ է մատուցում տ. Արսեն վրդ. Բերբերյանը և քարոզում տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիպրոս՝ մեկ ամսով հանգստանալու «Կրասնի կամեն» առողջարանում՝ ընկերակցությամբ Վրաստանի հայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի:

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը:

*
* *

Օգոստոսի 9-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում պատարագ է մատուցում տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը: Հայր սուրբը քարոզում է «Ուխտս դիք և կատարեցէք» բնաբանով:

*
* *

Օգոստոսի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Լոնդոն՝ իր պաշտոնատեղին է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

*
* *

Օգոստոսի 14-ին, ուրբաթ.—Այսօր Ժենև՝ իր պաշտոնատեղին է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

*
* *

Օգոստոսի 16-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում խաղողօրհնության արարողություն, որին ներկա էին նաև բազում սփյուռքահայ և օտար ուխտավորներ:

*
* *

Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Բ օր Վերափոխման: Մեռելոց.

Մայր տաճարում պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլչուճյանը:

Հավարտ պատարագի տեղի է ունենում պաշտոնական հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

*
* *

Օգոստոսի 23-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման.

Մայր տաճարում պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

*
* *

Օգոստոսի 28-ին, ուրբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոսի: Վեհափառ Հայրապետին օդանավակայանում դիմավորեցին Մայր Աթոռի միաբանությունը և վանքի պաշտոնեությունը: